Դշի (6 Սեպտ.). Էջմիածնայ Տէր Յովանէսն գնաց։

Ը–իս օր Ուրբաթ. տօն Ծննդեան Սուրբ Աստուածածնի։ Օրս ի փուռն գնացաք և հսապ արարին և զվէհրէսն ի տէզկեան եդին և ես ևս։

Կիրակի Ժ–ին՝ բարեկենդան Սուրբ Խաչի։

Բշիս (11 Սեպտ.) Ոսկան վարդապետն ի յեկեղեցիս մեր եկն. և օրս զղազիէսքէրքն փոխեցին։

ԺԷ–ի օր Կիրակի. Սուրբ Խաչ։

Դշի (20 Սեպտ.). Զաքարիա Դալֆայի տղան մեռաւ՝ արծաթագինն։

Շաբաթի օրս ԻԳ–ի մեր Ոհանի կինն մեռաւ և ի ժամ տարաք և այլ ևս Ե ննջեցեալք բերին ի ժամ և շարեցաւ կարգաւ ի գաւիթս եկեղեցոյն։ Եւ ո՛վ կարէ պատմել զաղէտս զայս, որ եղև յայսմ աւուրք, կամ զտարակուսանս քաղաքիս, և զսասանումն մեծամեծաց և փոքունց ո՛րպէս ճառեսցուք. զի մարդ եդին բռնաւորք յամենայն դրունս քաղաքիս և համարեցին զդիս մեռելոցն յաւուրս։ Ի քրիստոնէիցն և յայլազգացն Ռ և Դճ և Ը ելեալ. և ի մեռելոցս բնաւ ոչ գըտանիւր մի ծեր, այլ էին պատանեակք և երեխայք, մանուկք և երիտասարդք, որ և առհասարակ սոսկացաւ դողալով ամենայն քաղաքս ի մահտարաժամ ցասմանէս։ Եւ այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց ըստ մարգարէին Դաւթի. որ և աղաչեմք զամենայն սուրբս, զարիւնս և զաղօթս նոցա միջնորդ ունելով, առնելով ընդ իւրեանս զՍրբուհի Մայր Արարչին և բարեխօսութեամբ նոցա գթասցի միթէ քաղցրն և քաղցրասցի գթածն ի վերայ ստեղծուածին իւրոյ և բարձցէ պատիժ պատուհասին։ Ասասցեն երկինք և երկիր՝ եղիցի եղիցի. ամէն։

Կիրակի (24 Սեպտ.). բարեկենդան Սրբոյն Գէորքայ. և ի Մղտեսի Տիլէկենցն էաք կնքտուք վասն դստերն։ Օրս Տէր Ոսկանն յԱստուածածին գնաց։